

## ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԵՐՈՎ ԳՈՒՅՔԻ ՎՐԱ ԿԱԼԱՆՔ ԴՆԵԼՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### Ղափիթ Մելքոնյան

*ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալսիտիկայի  
ամբիոնի դոցենտ, իրավ. գիտ. թեկնածու*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 232-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գույքի վրա կալանք դնելը կիրառվում է քաղաքացիական հայցը, գույքի հնարավոր բռնագրավումը, բռնագանձումը և դատական ծախսերն ապահովելու համար:

Ըստ նույն օրենսգրքի 233-րդ հոդվածի՝ քրեական վարույթն իրականացնող մարմինն անհապաղ կալանք է դնում Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 103.1-ին հոդվածի 1-ին մասով նախատեսված բռնագանձման ենթակա գույքի վրա:

Գույքի վրա կալանք դնելու մասին որոշման մեջ պետք է մշակեն կալանքի ենթակա գույքը, ինչպես նաև գույքի այն արժեքը, որը բավական է քաղաքացիական հայցը և դատական ծախսերն ապահովելու համար:

ՀՀ քրեական օրենսգրքի 103-րդ հոդվածի համաձայն՝ հանցագործության կատարման հետևանքով ուղղակի կամ անուղղակի առաջացած կամ ստացված ցանկացած գույք, այդ գույքի օգտագործումից ստացված եկամուտները կամ այլ տեսակի օգուտները, այնպիսի հանցագործության կատարման համար օգտագործված կամ օգտագործման համար նախատեսված գործիքները և միջոցները, որի կատարման արդյունքում ստացվել է գույք, ահաբեկչության ֆինանսավորմանն ուղղված գույքը, այդ գույքի օգտագործումից ստացված եկամուտները կամ այլ տեսակի օգուտները, սույն օրենսգրքի 215.1-ին, 235.1-ին և 267.1-ին հոդվածներով նախատեսված մաքսանենգության ճանապարհով Հայաստանի Հանրապետության սահմանով տեղափոխված մաքսանենգության առարկաները, իսկ դրանց բացակայության դեպքում՝ դրանց համարժեք գույքը, բացառությամբ բարեխիղճ երրորդ անձի գույքի, տուժողին և քաղաքացիական հայցվորին հանցագործությամբ պատճառված վնասների հատուցման համար անհրաժեշտ գույքի, ենթակա են բռնագրավման՝ հօգուտ պետության:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն ընդգծել է, որ մեղադրյալի գույքի վրա կալանք դնելն ինքնին ենթակա չէ քննադատության՝ հաշվի առնելով մասնավորապես եվրոպական կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի երկրորդ պարբերությունը, սակայն պետք է հաշվի առնել սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքից օգտվելու սահմանափակմամբ անձի վրա չափազանց ծանր բեռ դնելու ռիսկը, և հետևաբար՝ պետք է ապահովել համապատասխան դատավարական երաշխիքներ՝ համոզվելու համար, որ անձի սեփականության իրավունքի վրա ազդեցությունը կամայական կամ այն կանխատեսելի չէ<sup>1</sup>:

Վճռաբեկ դատարանն իր հերթին արձանագրել է, որ անձի սեփականության իրավունքի համաչափ սահմանափակման տեսանկյունից կարևոր օրենսդրական պահանջ է նաև գույքի վրա կալանք դնելու մասին որոշման մեջ արգելադրման են-

<sup>1</sup> St´u *Borzhonov v. Russia* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2009 թվականի հունվարի 22-ի վճիռը, գանգատ թիվ 18274/04, կետեր 59-60:

թակա գույքի և դրա արժեքի հստակեցումը, ինչը նշանակում է հիմնավորել այդ հարկադրանքի միջոցի կիրառմամբ հետապնդվող նպատակները. դա պետք է լինի որոշակի և հստակ՝ ապահովելով հասարակության ընդհանուր շահի և անհատի սեփականության (կամ այլ գույքային) իրավունքի պաշտպանության միջև արդարացի հավասարակշռություն<sup>1</sup>:

Իրավակիրառ պրակտիկայում որոշակի խնդիրներ են առաջանում կոռուպցիոն հանցագործությունների քննության սկզբնական փուլում մեղադրյալի՝ արգելադրման ենթակա գույքի չափը որոշելիս: Բնական է, որ քննության սկզբնական փուլում առաջադրված մեղադրանքը քննության ընթացքում կարող է փոփոխվել՝ պայմանավորված նաև հանցագործության կատարման հետևանքով ուղղակի կամ անուղղակի առաջացած կամ ստացված գույքի չափի փոփոխմամբ: Սակայն քննության սկզբնական փուլում արգելադրման ենթակա գույքի չափը բացառապես առաջադրված մեղադրանքով պայմանավորելը կվտանգի տվյալ գույքի հետագա գոյությունը, քանի որ քննության ընթացքում՝ մինչև մեղադրանքի վերջնական ծավալների որոշումը, այն կարող է թաքցվել կամ օտարվել՝ անհնարին դարձնելով դրա հետագա բռնագրավումը:

Սա է պատճառը, որ վերաբերելի միջազգային փաստաթղթերը կոռուպցիոն հանցագործությունների քննության սկզբնական փուլում արգելադրման ենթակա գույքի ծավալը չեն պայմանավորում բացառապես սկզբնական մեղադրանքի ծավալով:

Այսպես, ՀՀ քրեական օրենսգրքում 103.1-րդ հոդվածն ավելացվել է 2014 թ. հունիսի 21-ի ՀՕ-114-Ն փոփոխությամբ, որի հիմնավորման մեջ նշված է հետևյալը. «Օրենսդրական փաթեթի հիմքում ընկել են 2009 թ. սեպտեմբերի 22-ին Եվրախորհրդի ՄԱՆԻՎԱԼ հանձնախմբի և Արժույթի միջազգային հիմնադրամի փորձագետների կողմից Հայաստանի Հանրապետությունում փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման (այսուհետ՝ ՓԼ/ԱՖ) դեմ պայքարի համակարգի 3-րդ փուլի գնահատման հաշվետվությամբ (այսուհետ՝ Գնահատման հաշվետվություն) արված երաշխավորությունները, ինչպես նաև ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտը կարգավորող ներկայիս օրենսդրության կիրառության ընթացքում ի հայտ եկած խնդիրները, բացերը և հակասությունները: Առաջարկվող փոփոխություններն ու լրացումները քննարկվել և արժանացել են «Հայաստանի Հանրապետությունում դրամանենգության, պլաստիկ քարտերի և այլ վճարային գործիքների բնագավառում զեղծարարության, փողերի լվացման, ինչպես նաև ահաբեկչության ֆինանսավորման դեմ տարվող պայքարի հարցերով» միջգերատեսչական հանձնաժողովի հավանությանը:

ՖԱԹՖ-ի 3-րդ հանձնարարականի հիման վրա և ի կատարումն Գնահատման հաշվետվությամբ տրված երաշխավորության ՀՀ քրեական օրենսգրքում և քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու նախագծով առաջարկվում է սահմանել հանցավոր ճանապարհով ստացված այն գույքի շրջանակը, որի վրա փողերի լվացման կամ դրան նախորդող հանցատեսակներով քրեական վարույթի ընթացքում գույքի հայտնաբերման դեպքում պետք է կալանք դրվի կամ որը պետք է ենթակա լինի բռնագրավման»:

Այլ խոսքով՝ Նախագծի հիմնավորման մեջ ուղղակիորեն նշվում է, որ այն մշակվել է ՖԱԹՖ-ի «Փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորման դեմ պայքարի մասին» 2012 թ. Փետրվարի 3-րդ հանձնարարականի հիման վրա և ի կատարումն դրա, հետևաբար՝ տվյալ կարգավորումները կիրառելիս անհրաժեշտ է հաշվի առնել ՖԱԹՖ-ի համապատասխան հանձնարարականներն ու դրանց կիրառման վերաբերյալ մշակած ուղեցույցները:

<sup>1</sup> Տե՛ս ԵԴ/0587/11/18 քրեական գործով Վճռաբեկ դատարանի 2019 թ. դեկտեմբերի 20-ի որոշման 15.2 կետը:

ՖԱԹՖ-ի հանձնարարականների համաձայն՝ «Երկրները պետք է ունենան միջոցներ, որպիսիք սահմանված են Վիեննայի կոնվենցիայով, Պալերմոյի կոնվենցիայով և Ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին կոնվենցիայով, այդ թվում՝ օրենսդրորեն սահմանված միջոցներ, որոնք իրավասու մարմիններին հնարավորություն են տալիս սառեցնել կամ արգելադրել և բռնագրավել ստորև թվարկվածները՝ չխախտելով բարեխիղճ երրորդ անձանց իրավունքները. **(ա) լվացված գույքը, (բ) փողերի լվացման կամ նախորդող հանցագործությունների կատարման արդյունքում ստացված գույքը,** կատարման համար օգտագործված կամ օգտագործման համար նախատեսված գործիքները, **(գ) ահաբեկչության ֆինանսավորումից, ահաբեկչական գործողությունների կատարումից կամ ահաբեկչական կազմակերպություններից ստացված կամ դրանց համար օգտագործված կամ օգտագործման համար նախատեսված կամ հատկացված գույքը կամ (դ) համարժեք այլ գույքը»:**

Նշված միջոցները պետք է իրավասու մարմիններին հնարավորություն տան.

**(ա) հայտնաբերել, հետապնդել և զնահատել բռնագրավման ենթակա գույքը, (բ) կիրառել նախնական միջոցներ, ինչպիսիք են սառեցումը կամ արգելադրումը, որոնց նպատակն այդ գույքի տնօրինումը, փոխանցումը կամ օտարումը կանխելն է, (գ) ձեռնարկել երկրի բռնագրավման ենթակա գույքը սառեցնելու կամ արգելադրելու կամ վերականգնելու կարողությունը սահմանափակող գործողությունների կանխմանը կամ անվավեր ճանաչմանն ուղղված քայլեր, և (դ) կատարել համապատասխան քննչական գործողություններ:**

Նույն հանձնարարականի համաձայն՝ «Երկրները պետք է հավաստիանան, որ իրավասու մարմինները պարտավոր են շուտափույթ կերպով հայտնաբերել, հետապնդել և սառեցում կամ արգելադրում նախաձեռնել այն գույքի նկատմամբ, որը ենթակա է կամ կարող է ենթակա դառնալ բռնագրավման կամ կասկածվում է հանցավոր ճանապարհով ստացված լինելու մեջ»<sup>1</sup>:

ՖԱԹՖ-ի հանձնարարականներին տեխնիկական համապատասխանության և ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգերի արդյունավետության զնահատման համար մեթոդաբանության համաձայն (անգլերեն բնօրինակը տպագրվել է 2013 թ. փետրվարին)՝ Երկրները պետք է ունենան միջոցներ, այդ թվում՝ օրենսդրորեն սահմանված, որոնք հնարավորություն են տալիս բռնագրավել ստորև թվարկվածները անկախ դրանց՝ քրեական գործով անցնող ամբաստանյալի կամ որևէ երրորդ անձի տիրապետման ներքո գտնվելու հանգամանքից. **(ա) լվացված գույքը, (բ) փողերի լվացման կամ նախորդող հանցագործությունների կատարման արդյունքում ստացված գույքը (ներառյալ՝ այդ գույքից ստացված եկամուտները և այլ տեսակի օգուտները), կատարման համար օգտագործված կամ օգտագործման համար նախատեսված գործիքները, (գ) ահաբեկչության ֆինանսավորումից, ահաբեկչական գործողությունների կատարումից կամ ահաբեկչական կազմակերպություններից ստացված կամ դրանց համար օգտագործված կամ օգտագործման համար նախատեսված կամ հատկացված գույքը կամ (դ) համարժեք այլ գույքը:** Երկրները պետք է ունենան միջոցներ, այդ թվում՝ օրենսդրորեն սահմանված, որոնք իրավասու մարմիններին հնարավորություն են տալիս. **(ա) հայտնաբերել, հետապնդել և զնահատել բռնագրավման ենթակա գույքը, (բ) կիրառել նախնական միջոցներ, ինչպիսիք են սառեցումը կամ արգելադրումը, որոնց նպատակը բռնագրավման ենթակա գույքի տնօրինումը, փոխանցումը կամ օտարումը կանխելն է, (գ) ձեռնարկել երկրի՝ բռնագրավման ենթակա գույքը սառեցնելու կամ արգելադրելու կամ վերականգնելու կարողությունը սահմանափակող գործողությունների կանխմանը կամ անվավեր ճանաչմանն ուղղված քայլեր, և (դ) կատարել համապատասխան քննչական գործողություններ**<sup>2</sup>:

<sup>1</sup> Կետ 30: Իրավապահ և քննչական գործառնություններ իրականացնող մարմինների պարտականությունները:

<sup>2</sup> Կետեր 4.1 և 4.2:

Նույն հանձնարարականի 30-րդ կետը, որը վերաբերում է իրավապահ և քննչական գործառնություններին, սահմանում է հետևյալը. «30.1 Երկրում պետք է լինեն նշանակված իրավապահ մարմիններ, որոնց վրա կդրվի ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ներպետական քաղաքականությունների շրջանակում փողերի լվացման, դրան նախորդող հանցագործությունների և ահաբեկչության ֆինանսավորման գործերի պատշաճ նախաքննությունն ապահովելու պատասխանատվությունը:

30.2 Նախորդող հանցագործությունների գործերով նախաքննություն իրականացնող իրավապահ մարմինների քննիչները **պետք է կա՛ն իրավասություն ունենան զուգահեռ ֆինանսական քննության ընթացքում՝ քննել հարակից ՓԼ/ԱՖ հանցագործությունները, կա՛ն կարողանան գործն ուղարկել մեկ այլ մարմին գործի քննությունը շարունակելու համար՝** անկախ այն բանից, թե որտեղ է կատարվել նախորդող հանցագործությունը:

30.3 Երկրում պետք է լինեն մեկ կամ ավելի նշանակված իրավասու մարմիններ, որոնք կարող են շուտափույթ կերպով հայտնաբերել, հետապնդել և սառեցում ու արգելադրում նախաձեռնել այն գույքի նկատմամբ, որը ենթակա է կամ **կարող է ենթակա դառնալ բռնագրավման**, կամ **կասկածվում է հանցավոր ձանապարհով ստացված լինելու մեջ:**

30.4 Երկրները պետք է ապահովեն Հանձնարարական 30-ի կիրառությունը նաև այն իրավասու մարմինների նկատմամբ, որոնք ինքնին իրավապահ մարմին չեն, սակայն պատասխանատվություն են կրում նախորդող հանցագործությունների ֆինանսական քննությունը կատարելու համար այնքանով, որքանով այդ իրավասու մարմիններն իրականացնում են Հանձնարարական 30-ով նախատեսված գործառնություններ:

30.5 Եթե կոռուպցիայի դեմ պայքարում ներգրավված իրավապահ մարմինները Հանձնարարական 30-ով նախատեսված պահանջների շրջանակում նշանակված են քննելու ՓԼ/ԱՖ հանցագործությունները, որոնք ծագում են կոռուպցիոն հանցագործություններից կամ կապված են դրանց հետ, այդ մարմինները նույնպես պետք է ակտիվներ հայտնաբերելու, հետապնդելու և սառեցում կամ արգելադրում նախաձեռնելու բավարար լիազորություններ ունենան»:

ՖԱԹՖ-ի հանձնարարականների համաձայն՝ «Քաղաքական ազդեցություն ունեցող անձինք (ՔԱՌԻԱ) այն անհատներն են, որոնց ներկայում կամ անցյալում վստահվել են հանրային առանցքային գործառնություններ տվյալ երկրում, օրինակ՝ երկրի կամ կառավարության ղեկավարները, բարձրաստիճան քաղաքական գործիչները, կառավարության, դատական իշխանության կամ բանակի բարձրաստիճան պաշտոնյաները, պետական կորպորացիաների բարձրաստիճան գործադիր ղեկավարները, քաղաքական կուսակցությունների կարևոր պաշտոնատար անձինք: Անձինք, որոնց ներկայում կամ անցյալում վստահվել են առանցքային գործառնություններ միջազգային կազմակերպություններում, այդ կազմակերպությունների բարձր ղեկավարության անդամներն են, այսինքն՝ տնօրենները, տնօրենի տեղակալները և խորհրդի անդամները կամ համարժեք գործառնությ իրականացնողները<sup>2</sup>: ՖԱԹՖ-ի հանձնարարականների համաձայն՝ (Քաղաքական ազդեցություն ունեցող

<sup>1</sup> «Ֆինանսական քննությունը» նշանակում է որևէ հանցավոր գործունեության հետ կապված ֆինանսական հարցերի քննություն, որը նպատակ ունի. (ա) պարզել քրեական ցանցերի գործունեության շրջանակը և/կամ քրեական հանցագործությունների տարածման աստիճանը, (բ) **հայտնաբերել և հետապնդել հանցավոր ձանապարհով ստացված գույքը**, ահաբեկիչների միջոցները և ցանկացած այլ ակտիվներ, որոնք ենթակա են կամ կարող են ենթակա դառնալ բռնագրավման, և (գ) հավաքել ապացույցներ, որոնք կարող են օգտագործվել քրեական հետապնդման վարույթում:

<sup>2</sup> ՖԱԹՖ-ի հանձնարարական Փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորման դեմ պայքարի մասին, փետրվար, 2012:

անծինք (Հանձնարարականներ 12 և 22))՝ ՔԱՌԲԱ-ների նկատմամբ սահմանված վերահսկողության խիստ միջոցները հավասարապես կիրառելի են նաև նրանց ընտանիքների անդամների նկատմամբ<sup>1</sup>: ՖԱԹՖ հանձնարարականները պահանջում են Քաղաքական ազդեցություն ունեցող անձանց ընտանիքի անդամներին **ևս դիտարկել որպես քաղաքական ազդեցություն ունեցող անծինք**, հաշվի առնելով այն ներուժը, որոնք նրանք ունեն իրենց ուցած հարաբերությունները չարաշահելու համար՝ ուղղված հանցագործության արդյունքում ձեռք բերված միջոցների տեղափոխմանը, բաշխմանը կամ փոխակերպմանը<sup>2</sup>:

Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 20-րդ կետի համաձայն՝ «**ռիսկը** փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման վտանգավորության և դրա հավանականության մասին վկայող հանգամանք է, որը կարող է բնութագրվել ըստ երկրների կամ աշխարհագրական տեղակայման, հաճախորդների տեսակի, գործարքների կամ գործարար հարաբերությունների տեսակի, ծառայությունների տեսակի կամ այլ չափանիշների»: Նույն հոդվածի 21-րդ կետի համաձայն՝ «Բարձր ռիսկի չափանիշը սույն օրենքով, լիազոր մարմնի իրավական ակտերով, ինչպես նաև հաշվետվություն տրամադրող անձի ներքին իրավական ակտերով սահմանված այնպիսի չափանիշ է, որը վկայում է փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման բարձր հավանականության մասին, **այդ թվում՝ քաղաքական ազդեցություն ունեցող անձ, նրա ընտանիքի անդամ կամ նրա հետ այլ կերպ փոխկապակցված անձ** (հայր, մայր, ամուսին, տատ, պապ, քույր, եղբայր, երեխաներ, ամուսնու ծնողներ) հանդիսացող հնարավոր կամ առկա հաճախորդները կամ իրական շահառուները...»: Այլ խոսքով՝ թե՛ ներպետական օրենսդրությամբ և թե՛ միջազգային չափանիշներով քաղաքական ազդեցություն ունեցող անձը, նրա ընտանիքի անդամները կամ նրա հետ այլ կերպ փոխկապակցված անծինք համարվում են փողերի լվացման տեսանկյունից **բարձր ռիսկայնություն ունեցողներ**:

ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ Կոնվենցիայի» 31-րդ հոդվածի համաձայն՝

«1. Յուրաքանչյուր Մասնակից պետություն առավելագույն չափով, որը հնարավոր է իր ներքին իրավական համակարգի շրջանակներում, պետք է ձեռնարկի այնպիսի միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել բռնագրավման հնարավորությունն ապահովելու համար՝ ա) հանցագործություններից ստացված եկամուտների, որոնք այդպիսին են ճանաչվել սույն Կոնվենցիային համապատասխան, կամ այն գույքի, որի արժեքը համապատասխանում է այդպիսի եկամուտների արժեքին. բ) գույքի, սարքավորման և այլ միջոցների, որոնք օգտագործվել են կամ նախատեսվել են իրավախախտումներ կատարելիս օգտագործելու համար, որոնք այդպիսին են ճանաչվել սույն Կոնվենցիային համապատասխան:

2. Յուրաքանչյուր Մասնակից պետություն պետք է ձեռնարկի այնպիսի միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել սույն հոդվածի 1-ին կետում թվարկվածներից ամեն մեկի բացահայտման, հետամուտ լինելու, սառեցնելու կամ առգրավելու հնարավորության ապահովման համար՝ հետագա բռնագրավման նպատակով:

3. Յուրաքանչյուր Մասնակից պետություն, իր ներքին օրենսդրությանը համապատասխան, պետք է ընդունի օրենսդրական և այլ այնպիսի միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել իրավասու մարմինների կողմից սառեցված, կալանված կամ բռնագրավված գույքի կառավարումը կարգավորելու համար, որը նշված է սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերում:

4. Եթե հանցագործություններից ստացված այդպիսի եկամուտները ամբողջությամբ կամ մասնակիորեն վերածվել կամ փոխակերպվել են այլ գույքի, ապա սույն հոդվածում նշված միջոցները պետք է կիրառվեն այդպիսի գույքի նկատմամբ:

<sup>1</sup> Տե՛ս FUTF Guidance. Politically exposed persons, կետ 46:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում, կետ 52:

5. Եթե հանցագործություններից ստացված այդպիսի եկամուտները միացվել են օրինական աղբյուրներից ձեռք բերված գույքին, ապա, առանց սառեցմանը և առգրավմանը վերաբերող ցանկացած լիազորությանը վնասելու, բռնագրավման ենթակա է գույքի այն մասը, որը համապատասխանում է միացված եկամուտների զնահատված արժեքին:

6. Շահույթի կամ այլ եկամուտների նկատմամբ, որոնք ստացվել են հանցագործություններից ստացված այդպիսի եկամուտներից՝ այն գույքից, որին վերածվել կամ փոխակերպվել են հանցագործություններից ստացված այդպիսի եկամուտները, կամ այն գույքից, որին միացվել են հանցագործություններից ստացված այդպիսի եկամուտները, նույնպես կիրառվում են սույն հոդվածում նշված միջոցները նույն կերպով և նույն աստիճանով, ինչ որ հանցագործություններից ստացված եկամուտների վերաբերյալ:

7. Սույն հոդվածի և սույն Կոնվենցիայի 55-րդ հոդվածի նպատակների համար յուրաքանչյուր Մասնակից պետություն պետք է լիազորի իր դատարաններին կամ այլ իրավասու մարմիններին կարգավորել բանկային, ֆինանսական կամ առևտրային փաստաթղթերի ներկայացման կամ արգելադրման մասին որոշումները: Մասնակից պետությունը չպետք է խուսափի սույն կետի դրույթներին համապատասխան միջոցներ ձեռնարկելուց՝ վկայակոչելով բանկային գաղտնիքի պաշտպանության անհրաժեշտությունը:

8. Մասնակից պետությունները կարող են քննարկել այն մասին պահանջներ սահմանելու հնարավորությունը, որ հանցագործություն կատարած անձը, այն չափով, որքանով այդպիսի պահանջը համապատասխանում է իրենց ներքին օրենսդրության հիմնարար սկզբունքներին և դատական ու այլ քննության բնույթին, ապացուցի հանցագործություններից ստացված այնպիսի ենթադրյալ եկամուտների կամ այլ գույքի օրինական ծագումը, որոնք ենթակա են բռնագրավման:

9. Սույն հոդվածի դրույթները չպետք է մեկնաբանվեն այնպես, որ վնաս պատճառվի բարեխիղճ երրորդ անձանց իրավունքներին:

10. Ոչինչ, ինչ պարունակում է սույն հոդվածը, չպետք է ազդի այն սկզբունքի վրա, ըստ որի այն միջոցները, որոնց մասին դրանում խոսվում է, սահմանվում և իրականացվում են Մասնակից պետության ներքին օրենսդրության դրույթներին համապատասխան և դրանք պահպանելու պայմանով:

ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ Կոնվենցիայի» տեխնիկական ուղեցույցի<sup>1</sup> համաձայն՝ «(...) Սա պահանջում է պետություններից բռնագանձել հանցագործության կատարման արդյունքում ստացված **ոչ միայն առաջնային, այլ նաև երկրորդային գույքը**»:<sup>2</sup> Առաջնային գույքը այն ակտիվներն են, որոնք ուղղակիորեն ստացվել են հանցավոր արարքի կատարման արդյունքում, օրինակ՝ 100,000 ԱՄՆ դոլար կաշառքը: Ի տարբերություն սրա, երկրորդային գույքը վերաբերում է այն օգուտներին, որոնք բխում են սկզբնական գույքից, օրինակ՝ բանկային հաշիվները, որոնք ավելանում են ներդրումներից: Հաշվի առնելով սա՝ Կոնվենցիան պահանջում է մասնակից պետություններից ապահովել ինչպես առաջնային, այնպես էլ երկրորդային գույքի պարտադիր բռնագանձում:

Չնայած 2-րդ հոդվածի (g) ենթակետում առկա՝ «հանցագործության կատարման արդյունքում ստացված գույք» եզրույթը ներառում է «հանցագործության կատարման արդյունքում ձեռքբերված» և «հանցագործության կատարումից բխող» գույքը, պարագրաֆը ուղղակիորեն հղում է կատարում հանցագործության կատարման արդյունքում ստացված գույքից բխող «եկամուտներին և այլ օգուտներին» և

<sup>1</sup> Technical Guide to the United Nations Convention Against Corruption, UNODC, New-York, 2009:

<sup>2</sup> Մեր քր. օր. 103.1-րդ հոդվածի եզրույթների նմանությամբ կարող ենք նշել նաև. «Ոչ միայն հանցագործության կատարման արդյունքում ուղղակիորեն ստացված, այլ նաև անուղղակիորեն ստացված գույքը»:

վերաբերում է նաև 4-րդ և 5-րդ պարագրաֆներում հղում կատարվող իրավիճակներից բխող օգուտներին՝ վերափոխված գույքին կամ փոխակերպված և միախառնված գույքին: *Այլ կերպ ասած՝ հանցագործության կատարման արդյունքում ստացված գույքի արժեքի ցանկացած գնահատական, եթե նույնիսկ վերաբերելի չէ որևէ հանցավոր գործունեության, նույնպես պետք է ենթակա լինի բռնագանձման:*

• Իրավասու մարմինները պետք է լիազորված լինեն նախնական միջոցներ կիրառելու քննության ամենասկզբից: Արդյունավետության նկատառումներից ելնելով՝ սահմանափակման, առգրավման կամ սառեցման միջոցները պետք է կիրառվեն *ex parte*<sup>1</sup> և առանց նախնական ծանուցման:

• Ե՛վ օբյեկտի, և՛ արժեքի վրա հիմնված բռնագանձման մոդելներ ունեցող մասնակից պետությունները պարտավոր են ոչ միայն ապահովել, որ հանցավոր արարքին «վերաբերող», «հետքերով կապված», հանցավոր արարքի կատարմանը «ներգրավված» գույքը կարող է առգրավվել, այլ նաև ապահովել, որ դրամական տուգանք ենթադրող դատավճռի կատարման համար անհրաժեշտ ակտիվները ընկնում են ակտիվների սառեցման դրույթների գործողության ներքո: Նույն կերպ, մասնակից պետությունները կարող են քննարկել մեղադրյալին պատկանող «ոչ վերաբերելի» ակտիվների սառեցման հնարավորությունը, եթե արարքի կատարմանը «վերաբերող» գույքը գտնվում է օտարերկրյա իրավագործության ներքո:

ՄԱԿ-ի Թմրամիջոցների և հանցագործության գրասենյակի (UNODC) «Հանցագործության արդյունքում ձեռք բերված միջոցների բռնագանձման նպատակով միջազգային համագործակցության վերաբերյալ ուղեցույցում» նշված է հետևյալը.

«12. Բոլոր պաշտոնատար անձինք, որոնց հանձնարարված է քննելու նյութական կազմակերպված հանցագործություններ, շատ հաճախ կենտրոնանում են նյութական արարքներն ապացուցելու համար անհրաժեշտ տարրերը հաստատելու վրա: Հետագայում վերջիններս կարող են իրենց հայացքն ուղղել ակտիվները թիրախավորելու համար անհրաժեշտ ապացույցների վրա: Մինչդեռ այդ ակտիվները մշտապես կարող են տեղափոխվել՝ քննությունը խոչընդոտելու նպատակով կամ այդ նույն ակտիվները կարող են ցրվել, երբ նյութական հանցագործությունները քննվում են: *Նպատակը պետք է լինի ապօրինի գույքի սառեցումը որքան հնարավոր է շուտ ավելի լայն կազմակերպված հանցագործության քննության համատեքստում:*

(...)

176. Քննչական աշխատանքի այս տեսակը ժամանակատար է, բայց այն անգնահատելի: Այն հատկապես վերաբերելի է այն դեպքերին, երբ գույքի հարցերով զբաղվող քննիչը որոշում է առգրավել կամ սառեցնել ակտիվները հետագա բռնագանձման վարույթի նպատակով: Նա կարող է հայտնաբերել, որ տվյալ ակտիվի նկատմամբ պարտքերը զրոյացնում են դրա հետագա բռնագրավման արժեքը: Կարող են հայտնաբերվել նաև հարցաքննության ենթակա լրացուցիչ անձինք: Նույն դիտարկումները վերաբերում են ցանկացած գույքի, որը թեև գրանցված է այլ անձի անունով, բայց փաստացի երևում է, որ այն տիրապետում է քննության թիրախ հանդիսացող անձը:

(...)

178. Թիրախի վերաբերյալ տեղեկատվություն պարունակող ֆայլ ստեղծելու պրակտիկայի մասին վերևում խոսվել է: Ակտիվները հետաքննող ցանկացած քննության եզրահանգման մեջ էական է մանրակրկիտ և համակարգված ակտիվների ու ֆինանսների պրոֆիլի առկայությունը: Քննիչը պետք է համընդգրկուն վերլուծության ենթարկի այն հանգամանքը, թե ինչպես են ֆինանսական տարբեր տեղեկանքները և թիրախավորված ակտիվները փոխհարաբերվում միմյանց հետ: Նշված փաստաթուղթը պետք է պատրաստվի այնպես, որ դատախազը կամ վերադաս պաշտոնատար անձը արագորեն կարողանա որոշել այն ապացույցը, որը

<sup>1</sup> Տվյալ անձի բացակայությամբ:

մատնացույց է անում կոռումպացված գույքը: Այլ կերպ ասած, արժեքի վրա հիմնված բռնագանձման համակարգում թիրախի զուտ հարստությունը և նրա ամբողջ գույքի արժեքը պետք է հաստատվեն: Փորձագետ հաշվապահները կարող են նման վերլուծություն անել ակտիվները հետաքննող քննիչների օգնությամբ»:

*Գոգիտիդեզն և այլք ընդդեմ Վրաստանի* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանը դիրքորոշում է արտահայտել առ այն, որ, ի թիվս այլնի, որ գույքի բռնագրավմանն ուղղված միջոցները (*ենթադրվում է նաև բռնագրավման ապահովմանն ուղղված միջոցները, այդ թվում՝ գույքը կալանադրելը*) կարող են կիրառվել ոչ միայն հանցանքի արդյունքում ստացված միջոցների նկատմամբ, այլ նաև այն գույքի, ներառյալ՝ եկամուտների և անուղակի օգուտների նկատմամբ, որոնք ձեռք են բերվել հանցավոր ճանապարհով ստացված գույքը թաքցնելու կամ փոխակերպելու կամ այլ, այդ թվում օրինական գույքի հետ միախառնելու արդյունքում:

Գույքի բռնագրավմանն ուղղված միջոցները (*ենթադրվում է նաև բռնագրավման ապահովմանն ուղղված միջոցները, այդ թվում՝ գույքը կալանադրելը*) կարող են կիրառվել ոչ միայն այն անձնաց նկատմամբ, ովքեր ուղակիորեն կասկածվում են հանցավոր արարք կատարելու մեջ, այլ նաև երրորդ անձանց նկատմամբ, որոնց պատկանում են սեփականատիրոջ իրավունքները առանց *bona fide* պահանջի՝ նպատակ ունենալով քողարկել իրենց ապօրինի մասնակցությունը խնդրի առարկա հարստությունը կուտակելու գործում (*Gogitidze and Others v. Georgia*, no 36862/05, § 105, 12 May 2015):

Եվրոպական դատարանը, իր մի շարք որոշումներում անդրադառնալով Կոնվենցիայի 1-ին արձանագրության 1-ին հոդվածի կիրառման տեսանկյունից համաչափության թեստին, նշել է, որ «արդարացի հավասարկշռություն» պետք է սահմանվի հասարակական շահով պայմանավորված պահանջների և անձի հիմնարար իրավունքների պաշտպանության միջև: Հենց սրանով պայմանավորված Եվրոպական դատարանը սահմանել է, որ մի շարք այնպիսի ծանր հանցագործությունների վերաբերյալ գործերով, ինչպիսիք են շմրամիջոցների ապօրինի շրջանառությունը (*Webb v. the United Kingdom (dec.)*, no. 56054/00, 10 February 2004), կազմակերպված հանցավորությանը վերաբերող գործերը (*Raimondo v. Italy*, 22 February 1994, §30, Series A no. 281-A), փողերի լվացումը (*Gogitidze and Others v. Georgia*, no 36862/05, § 105, 12 May 2015), պետություններն օժտված են «լայն հացեցողությամբ»:

Արքուրին և այլք ընդդեմ Իտալիայի որոշմամբ դատարանն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «Դատարանը հաջորդիվ նկատում է, որ բռնագրավումը, որը բողոքարկվել էր, նպատակ ուներ կանխելու այն գույքի հասարակության համար վտանգավոր եղանակով օգտագործումը, որի օրինական ծագումը հաստատված չէր: Հետևաբար Դատարանը գտնում է, որ դրա արդյունքում տեղի ունեցած միջամտությունը ծառայում է ընդհանուր շահին (*տես Ռայմոնդոն ընդդեմ Իտալիայի, 22 փետրվար 1994, ժողովածու Ա, N-281-Ա, էջ 17, պարբ. 30, և Հանձնաժողովի որոշումը Մ-ն ընդդեմ Իտալիայի գործով, մեջբերված է վերևում, էջ 59 և էջ 100*): Այնուամենայնիվ դեռևս պետք է որոշվի, թե արդյոք այս միջամտությունը համաչափ է եղել հետապնդվող իրավաչափ նպատակին:

Այս կապակցությամբ Դատարանը գտնում է, որ կիրառված միջոցը կազմում է հանցագործությունների կանխման քաղաքականության մաս, գտնում է, որ նման քաղաքականություն իրականացնելիս օրենսդիրը պետք է ունենա հայեցողության լայն շրջանակ՝ նկատի ունենալով ինչպես հանրային շահի վրա ազդող խնդրի առկայությունը, որը պահանջում է վերահսկողության միջոցներ, այնպես էլ նման միջոցներ կիրառելու պաշտաձ եղանակը» (*Arcuri and Others v. Italy (dec.)*, no. 52024/99, 5 July 2001):

Այսպիսով, վերը նշված միջազգային փաստաթղթերում արտացոլված մոտեցումների ընդհանրացմամբ կարելի է փաստել, որ քրեական գործի նյութերից բխող



փաստական տվյալների հիման վրա քննության սկզբնական փուլում արգելադրված գույքի ծավալները կարող են գերազանցել առաջադրված մեղադրանքի ծավալում նշված գույքի չափը՝ պայմանով, որ առկա են բավարար հիմքեր հետևություն կատարելու համար, որ քրեական գործով քննությամբ արդյունքում բռնագանձման ենթակա գույքի չափն անառարկելիորեն ավելանալու է:

## ОСОБЕННОСТЬ НАЛОЖЕНИЯ АРЕСТА НА ИМУЩЕСТВО ПО ДЕЛАМ О КОРРУПЦИОННЫХ ПРЕСТУПЛЕНИЯХ

**Давид Мелконян**

*Доцент кафедры уголовного процесса и криминалистики ЕГУ, кандидат юридических наук*

Статья посвящена вопросам наложения ареста на имущество, подлежащего конфискации, при расследовании уголовных дел о коррупционных преступлениях. На основании анализа международных документов, таких как рекомендации ФАТФ, Конвенции ООН и постановлений ЕСПЧ, автор приходит к выводу, что на начальном этапе расследования коррупционных преступлений размер изъятого имущества может превышать размер имущества, указанного в обвинительном заключении при наличии достаточных оснований о том, что в результате уголовного дела объем имущества, подлежащего конфискации, несомненно, будет возрастать.

## SPECIFIC FEATURES OF ARRESTING PROPERTY IN CASES OF CORRUPTION CRIMES

**Davit Melkonyan**

*Associate Professor at the YSU Chair of Criminal Procedure and Criminalistics, Candidate of Legal Sciences*

The article is dedicated to the seizure of property subject to confiscation during the investigation of corruption crimes. Based on an analysis of international documents, such as the FATF Recommendations, the UN Conventions, and the ECHR judgments, the author concludes that at the initial stage of the investigation of corruption crimes, the amount of seized property may exceed the amount of property mentioned in the indictment, provided there are sufficient grounds that as a result of the investigation, the amount of property subject to confiscation will increase unquestionably.

**Բանալի բառեր-** գույքի վրա կալանք դնել, կոռուպցիոն հանցագործություն, բռնագրավում, բռնագանձում, փողերի լվացում

**Ключевые слова:** арест имущества, коррупция, конфискации, экспроприация, отмывание денег.

**Key words:** seizure of property, corruption, confiscation, expropriation, money laundering.